№ 181 Նոյեմբերի 23 Շաբաթ 1883 Նոյեմբերի 23 Շաբաթ № 181

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօնօրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1884** ԹՎԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 բուբլ, վեց ամսվայ 6 բուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 բուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ».*

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Փամբակի գաւառը և նրա բնակիչները։ Նամակ Արդուինից։ Նամակ Խմբագրին։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Լուսընկայ գիշեր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓԱՄԲԱԿԻ ԳԱՒԱՌԸ ԵՒ ՆՐԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

—

Փամբակի գաւառը մի երկար ու ձիգ ձոր է՝ հարաւային և հիւսիսային կողմերից շրջապատված շղթայաձև, անտառախիտ և բարձրագագաթ լեռներով։ Այս գաւառը ընկնում է Դիլիջանի ա-

ղրապոլ տանող խճուղին. ճանապարհի երկու կողմից զուգընթացաբար բաւական գեղեցիկ տեսքով կառուցած են մալականների տները։ Սրանց նիստ ու կացը, տների գեղեցկութիւնը, մաքրասիրութիւնը և վերջապէս կեանքի ապրելու եղանակը, հպմեմատելով մեր գիւղացիների հետ՝ զոհացուցիչ կարելի է համարել. սրանք, շատ աննշան բացառութեամբ, ոչ մի անգամ առանց տաք կերակուրի չեն մնայ, իսկ առաւօտ և երեկոյ թէյի գործածութիւնը ստիպողական կարիք է նրանց համար. նրանք օրը աշխատում, օրը ուտում են. սրանց պարապմունքը գլխաւորապէս երկրագործութիւնը և կառապանութիւնն է. անասնապահութեան մէջ նոյնպէս յետ չեն մնում հարևան գիւղերից. սրանց մէջ այնպիսիները կան, որ հարիւրով ոչխար և տասնեակներով կովեր են պահում։ Թէ երկրագործութեան և թէ կառապանութեան մէջ, նոցա կանայքը անբաժան աշխատակից են իրանց մարդկանց. պատահում է և երբեմն, որ առանց մարդու վարում, ցանում հնձում և գութդանոներով մինչև անգամ մթերքներ են վաճառանում Ալէքսանդրապոլ և Ղարս. իսկ դպրոց ունենալը, եթէ չեմ սխալվում, սրանց մէջ ամօթ բան է համարվում. շատ քիչ կարդալ—գրել գիտցողներ կան սրանց մէջ. իսկ մտածել դպրոց ունենալու անհրաժեշտութեան մասին՝ այդ երևակայական կը լիներ։ Ցեղացոց մէջ գողութիւն երբէք չի պատահիլ. իսկ բացառութիւն կազմողի հետ խիստ անդթաբար կը վարվեն. աւելի խիստ են վարվում և արտաքին թշնամիների հետ. երևի հէնց այս է պատճառը, որ սրանցից գողութիւն անել չէ պատահում, իսկ եթէ պատահում է, շատ քիչ։ Այս ամենից յետոյ, պէտք է խոստովանել, որ բարոյականութիւնը սրանց մէջ բոլորովին արմատ չունի. փչացած են վերին աստիճանի։

Այս գիւղից յետոյ, անցորդին երևում է Համզաչիման հայաբնակ գիւղը։ Այս գիւղը բաւական մեծ է. բաւականին ընդարձակ է նոյնպէս դաշ-

տերի և արօտատեղիների կողմից. երկրագործութիւնը և անասնապահութիւնը այստեղ կատարեալ է. առաջինը թէև նահապետական ձևով, սակայն ի նկատի ունենալով գիւղացոց հանդարտ եռանդը երկրագործութեան մէջ, պէտք է գովել սրանց. պատերազմի տարին մինչև անգամ սրանք երկրագործութիւնից ձեռք չը վերառան, այն ինչ մեր զարաքիլիսեցիներից շատերը իրանց այժը կենտրոնացրին միայն առևտրի մէջ. իսկ հետևանքը այն եղաւ, որ 79 թուի սովը ոչ միայն կլանեց տեղացոց ձեռքի դրամները, այլ և հարիւրներով պարտքի տակ թողեց, և մինչև այսօր էլ դեռ տնքում է անգութ հարստի 20—30 կ. առած տոկոսի տակ. սակայն Համզաչիմանցիները խաղաղ և հանդիստ կերպով վայելում են իրանց աշխատանքի պտուղը, և այսօր համեմատաբար հարուստ են (մի քանի մանաւորները մի կողմ դրած) մեր գիւղացիներից։ Այս գիւղում, բացի մի քանի հարուստ մարդկանց տներից, մեծ մասը անյարմար են բնակութեան. ես գիտեմ մի քանի ընտանիքներ, որոնք բաւականին կարողութիւն ունեն, սակայն նրանց բնակարանները որջերի են նմանում. սրանցից պէտք է երևակայել թէ ինչ կը լինեն աղքատներինը. առհասարակ սրանց և մեր բոլոր գիւղացիների նիստ ու կացը շատ տարբեր է յիշեալ Նիկիտին գիւղի մալականներից. իսկ կեղտոտութիւնը թէ սրանց և թէ մեր բոլոր գիւղացիների մէջ իր վերին աստիճանին է հասած. ամեն տան առաջ տաւարի աղբով զարդարված է։ Ենթադրենք թէ կեղտոտութիւնը բնակիչների առողջութեանը չէ վնասում, բայց ոստիկանութիւնը կամ ժողովրդի ղեկավարները ինչու չեն ուզում հասկանալ՝ թէ անձրևային օրերը ինչ զժոխային պատկեր է ներկայանում իրանց առաջ։ Համզաչիմանցիները ունեն մի լաւ—քարաշէն եկեղեցի և երկու քահանայ, նրանցից մէկը, բացի այն, որ իր պաշտօնին անհարազատ և անհաւատարիմ է, միևնոյն ժամանակ շատ ընդունակ է հասարակութեան մէջ երկ-

տերի և արօտատեղիների կողմից. երկրագործութիւնը և անասնապահութիւնը այստեղ կատարեալ է. առաջինը թէև նահապետական ձևով, սակայն ի նկատի ունենալով գիւղացոց հանդարտ եռանդը երկրագործութեան մէջ, պէտք է գովել սրանց. պատերազմի տարին մինչև անգամ սրանք երկրագործութիւնից ձեռք չը վերառան, այն ինչ մեր զարաքիլիսեցիներից շատերը իրանց այժը կենտրոնացրին միայն առևտրի մէջ. իսկ հետևանքը այն եղաւ, որ 79 թուի սովը ոչ միայն կլանեց տեղացոց ձեռքի դրամները, այլ և հարիւրներով պարտքի տակ թողեց, և մինչև այսօր էլ դեռ տնքում է անգութ հարստի 20—30 կ. առած տոկոսի տակ. սակայն Համզաչիմանցիները խաղաղ և հանդիստ կերպով վայելում են իրանց աշխատանքի պտուղը, և այսօր համեմատաբար հարուստ են (մի քանի մանաւորները մի կողմ դրած) մեր գիւղացիներից։ Այս գիւղում, բացի մի քանի հարուստ մարդկանց տներից, մեծ մասը անյարմար են բնակութեան. ես գիտեմ մի քանի ընտանիքներ, որոնք բաւականին կարողութիւն ունեն, սակայն նրանց բնակարանները որջերի են նմանում. սրանցից պէտք է երևակայել թէ ինչ կը լինեն աղքատներինը. առհասարակ սրանց և մեր բոլոր գիւղացիների նիստ ու կացը շատ տարբեր է յիշեալ Նիկիտին գիւղի մալականներից. իսկ կեղտոտութիւնը թէ սրանց և թէ մեր բոլոր գիւղացիների մէջ իր վերին աստիճանին է հասած. ամեն տան առաջ տաւարի աղբով զարդարված է։ Ենթադրենք թէ կեղտոտութիւնը բնակիչների առողջութեանը չէ վնասում, բայց ոստիկանութիւնը կամ ժողովրդի ղեկավարները ինչու չեն ուզում հասկանալ՝ թէ անձրևային օրերը ինչ զժոխային պատկեր է ներկայանում իրանց առաջ։ Համզաչիմանցիները ունեն մի լաւ—քարաշէն եկեղեցի և երկու քահանայ, նրանցից մէկը, բացի այն, որ իր պաշտօնին անհարազատ և անհաւատարիմ է, միևնոյն ժամանակ շատ ընդունակ է հասարակութեան մէջ երկ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍՆԿԱՅ ԳԻՇԵՐ

(Վէպ Զախէր-Մազօխի)

—

Գեղեցիկ ամառնային գիշեր էր։ Հրայանը ուսիս դրած, ես ցած էի իջնում սարից, իսկ անդիսական յոգնած և մեծ ջրասուզիկ շունը, լեզուն դուրս պարզած, քայլ առ քայլ հետևում էր ինձ։ Մենք մոլորվել էինք ճանապարհից։ Այդ պատճառով, շատ անգամ կանգ էի առնում ես, նայում էի դէպի ամեն կողմ և աշխատում էի մտաբերել ճանապարհի ուղղութիւնը։ Այդ միջոցին իմ շունը ամեն անգամ պառկում էր և հարցական հայացքով նայում էր իմ վրա։

Մեր հանդէպ տարածված էր ախորժելի, ալիքաւոր շրջակայք, տեղ-տեղ ծածկված անտառով։ Մութ-կապտագոյն ծառերի վրա երևում էր կարմիր, լրացած լուսինը և պայծառ կերպով լուսաւորում էր մթին երկինքը։ Աստղերը փառահեղ ու հանդարտ կերպով սահում էին արևելքից դէպի արևմուտք, և հիւսիսային հորիզոնի վրա փայլում էր Մեծ Արջային համաստեղութիւնը։ Մերձակայ ուռիների միջից բարձրանում էին թափանցիկ շղթիներ, որոնք թռթռում էին բաց-կանաչագոյն լոյսի մէջ։ Ձախնային սարեակը հառաչում էր շամբուտի մէջ։ Որքան աւելի մենք հեռանում էինք լեռներից, այնքան աւելի առատութեամբ լուսինը լուսաւորում էր դաշտավայրերը։ Ծառերի մթին շարքերը կամաց-կամաց մնացին մեր ետևում, և մեր աչքերի առջև ներկայացաւ մի տափարակ, որ կատարեալապէս նման էր աղօտափայլ ծովի, որի վրա, ինչպէս մի նաւ, բացարած առագաստներով, լողում էր կալուածատիրոջ տունը

իր մթին կաղամախիներով։ Ժամանակ առ ժամանակ թեթև քամին անցնում էր հասկերի ու տերևների վրայով և հասցնում էր մեզ խիստ հրաշալի ձայներ, որոնք տիւռը և մի և նոյն ժամանակ գեղեցիկ մեղեդիի հնչիւնների փոխվեցան, երբ ես մօտեցայ տանը։ Այդ լաւ երգեհոնի հնչիւններ էին. հմուտ ձեռքեր ածում էին Բեթհովէնի լուսնային սօնատը։ Ինձ այնպէս էր թւում, որ երգեհոնի լիահնչիւն և հնազանդ կլաւիշների միջից լսում էի մարդկային վիրաւորված սրտի ձայնը. յանկարծ դրան հետևեց սարսափելի դիսսոնանս—և ապա բոլորը լռեց։ Ես մի քանի քայլով միայն հեռու էի գտնվում կալուածատիրոջ տնից։ Ինձ լսելի էր լինում մթին կաղամախիների տխուր սօսափիւնը։ Բակում շունը տրտում կերպով շարժում էր իր շղթան։ Հեռուից լսվում էր ջրի միակերպ և ողբալի ձայնը։

Կալուածատիրոջ տան պատշգամբի վրա երևաց մի կին. նա ձեռքերով յենվեցաւ մուհաջարի վրա և մտածութեան մէջ ընկաւ։ Նրա հասակը բարձր էր և վայելչակազմ, բայց զունաթափ դէմքը լուսնի լոյսի առջև արտափայլում էր ֆոսֆորային շողքերով։ Նրա շքեղ, թուխ գիսակները, մեծ հանգոյցներով, օղակ-օղակ իջնում էին նրա ուսերի վրա։ Հաղիւ թէ լսել էր նա իմ քայլերի ձայնը, իսկոյն գլուխը վեր բարձրացրեց և յառեցաւ դէպի ինձ իր մեծ, սեռրակ և տամուկ աչքերով։ Ես պատմեցի նրան, թէ ինչ էր պատահել ինձ հետ և խնդրեցի, որ գիշերը օթևանելու տեղ տայ ինձ։

—Բոլորը, ինչ որ ունենք մենք, պատրաստ է ձեզ ծառայելու,—ասաց նա իր ախորժելի և փափուկ ձայնով,—մենք խիստ հաղիւ անգամ բաւականութիւն ենք ունենում մեզ մօտ հիւր ընդունելու։ Խնդրում եմ, ներս համեցէք։

Ես բարձրացայ փայտեայ փտած սանդուղքների

վրայով, սեղմեցի տատիկնոջ փոքրիկ, դողդոջուն ձեռքը և բաց դռնով ներս մտայ տունը։

Մենք յայտնվեցանք մի մեծ, քառանկիւնի սենեակում, որի պատերը սպիտակացրած էին կրով, իսկ նրա բոլոր զարդարանքը կայացնում էին՝ թղթախաղի հին սեղանը և հինգ փայտեայ աթոռներ։ Սեղանի ոտներից մէկը պակաս էր, որի փոխարէն դրել էին կասկածաւոր աթոռներից մէկը, որը այնքան ցածր էր, որ չնորհիւ իր վրա դարած ադիւանների, հազիւ կարողանում էր համապատասխանել իր նոր նշանակութեանը։ Սեղանի չուրջը նստած էին չորս տղամարդիկ և թուղթ էին խաղում։ Ցանտէրը, տեսնելով ինձ, իր տեղից վերկացաւ, և, չիբուխը պինդ բռնած ատամների մէջ, ձեռք տուեց ինձ։ Դա մի բարձրահասակ տղամարդ էր, չէկ մազերով, դէմքի բութ և կոշտ գծերով, խորին կապտագոյն աչքերով, կարճ խուզած գլխով, և նոյնպէս կարճ ու կարծր բեխերով։ Մինչդեռ ես կրկնում էի նրան ինձ հետ պատահած արկածը և իմ խնդիրքը, նա չը սպասեց մինչև վերջը, այլ կարեկցութիւն ցոյց տալու համար շարժեց գլուխը, յետոյ նորից նստեց իր տեղը, իր խաղաթղթերը կրկին բաց արաւ սեղանի վրա, և այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում իմ վրա։

Ցանտիկինը հարևան սենեակից քարշ տուեց ինձ համար մի բազկաթոռ և յետոյ դուրս գնաց սպասաւորներին հարկաւոր պատուէրները տալու համար. այդ միջոցին ես ժամանակ գտայ ուշադրութեամբ զննել ինձ անծանօթ հասարակութիւնը։

Ամենից մօտիկ դէպ ինձ նստած էր հարևան գիւղի ծխական քահանան. դա իր կազմվածքով և մինակների ուժով մի կատարեալ վիթխարի էր, և աւելի ահռելի էր թւում իր եղան ծոծրակով ու հարթած գէմքով, որի վրա օղին դրել էր բազմաթիւ տեսակ-տեսակ գոյներ։ Նա միշտ ժպտում էր մի

ինչ-որ անբացատրելի կարեկցութեամբ, երբեմն բաց էր անում իր քթափոշու մեծ ու երկայնաձև տուփը, լցնում էր էնֆիլայով իր տափակ քթի լայն պնչերը, յետոյ դուրս էր քաշում ծոցից կապոյտ թաշկինակը, նախշած ֆանտաստիկական նկարներով, և նրանով սրբում էր իր բերանը։ Նրա կողքին նստած էր մի ալեոր կապալառու, ունգարական սև հագուստով, որը իր քթով անխոնջ կերպով շրուշացնում էր և ծխում էր ամենաթունդ սև սիգարներ։ Երրորդը մի հուսար էր, կակուղ մազերով և կոշտ սև բեխերով։ Նա բընակվում էր այդ տան մէջ և, որպէս երևում էր, սիրում էր լաւ ապրել։ Նրա կիտիլը կօճկած էր, իսկ վզին ամենևին փողապատ չունէր։ Խաղի ժամանակ նրա երեսը անշարժ էր մնում, միայն երբ տանուլ էր տալիս, սկսում էր բերանից դուրս թողնել ծխի սարսափելի կոյտեր և աջ ձեռքը զարկում էր սեղանին։ Ինձ առաջարկեցին մասնակցել խաղին, բայց ես պատճառ բերելով իմ յոգնածութիւնը, հրաժարվեցայ։ Շուտով տուեցին մեզ գինի և սառն նախաճաշիկ։

Ցանտիկինը վերադարձաւ, նստեց փոքրիկ, կինամոնի գոյնով բազկաթոռի մէջ, որ ներս բերեց նրա համար մանկահասակ կազակը, և սկսեց գըլանակ ծխել։ Նա իմ բաժակը նախ մօտեցրեց իր շրթունքին, յետոյ մի առանձին քաղցր ժպիտով տուեց ինձ։ Մենք խօսում էինք նրա հետ այն սօնատի մասին, որը նա ածում էր այնքան խորհրդաւոր կերպով, խօսում էինք Ցուրգենևի վերջին գրքի մասին, խօսում էինք ռուս դերասանների խումբի մասին, որը մի քանի ներկայացումներ էր տուել Կալօմէյում, խօսում էինք հունձքի մասին, համայնքի ընտրութիւնների մասին, և մեր գիւղացիների մասին, որոնք արդէն սկսել էին դանվել խմել, և այն մասին, թէ ինչպէս բազմացաւ խարեբաների թիւը ճորատէրութեան

պառակուտիներ ձգելու. իսկ զպրոցը ահա մի քանի տարի է որ փակված է չնորհիւ նոցա նախորդ ուսուցիչ Հալաճեանի. նա, որ այժմ հեռացած է ուսումնարանից, իր խռովարար յատկութեամբ, հեռուից անգամ չէ դադարել գիւղացիներին կուսակցութեանց բաժանել. իսկ այս տարի, չնորհիւ թեմական տեսչի, չինել են մի տուն տղայոց զպրոցի համար, ուսուցիչն էլ արդէն վարձած է: Պէտք է խոստովանել, որ Համզաչիմանցիք շատ հանդարտ ժողովուրդ են, սակայն եթէ մի խռովարար ձեռք առիթ է լինում նրանց միմեանցից անջատելու, այն ժամանակ նրանց «կամքի» բերելը խիստ դժուար է. հէնց այս էր պատճառը, որ չարունակ երկու տարիներ զրկուած էին ուսումնարանից:—Այս գիւղում երկու խանութ միայն կան. իսկ սոցա առևտրի աղբիւրները կազմում են գլխաւորապէս Ալէքսանդրապօլը, Դիլիջանը և Ղարաքլիսան: Սրանք ընդհանրապէս վերառած շատ պարզ են հաղնվում:

Համզաչիմանից յետոյ պատահում է մեզ Վօսկրիսէնկայ մալականաբնակ գիւղը. սոքա իրանց արիւնակիցների հակապատկերն են ներկայացնում. սրանք համեմատաբար առաջիններից թէ աղքատ են և թէ կեղտոտ կենցաղավարութեան մէջ. ինչ բանով պարապում են առաջինները, նոյն բանով պարապում են և սրանք. վարելահողերի և արօտատեղիների կողմից շատ հարուստ են ինչպէս Նիկիտինցիք, այնպէս և Վօսկրիսէնկացիք. սոյն երկու գիւղերից ես բաւական մեծ թիւով անցեալ տարիները գաղթեցին Ղարսի նահանգը. իսկ գաղթածների հողերը մնացել են կրկին մնացածներին:—Վօսկրիսէնկայ գիւղի արևմտեան կողմում կան մի քանի դեսեատին հողեր. այս հողերը նախորդ ժամանակներում պատկանում էին Ղարաքլիսեցոց. սակայն վերջին տարիներս, չը գիտենք ինչ հանգամանքներից դրդված, ապօրինաբար այդ հողերից օգտվում են մալականները: Ղարաքլիսան, որ անհամեմատ մեծ է Վօսկրիսէնկայից, և ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջինից բաւական մեծ թիւով գաղթել են Ղարսի նահանգը, անարդարութիւն կը լինէր, եթէ յիշեալ մի քանի դեսեատին հողերից զրաքլիսեցիները չօգտվէին. հաւատի ենք, որ բարեխնամ կառավարութիւնը, աչքի առաջ ունենալով այս գիւղացոց աղքատութիւնը հողի կողմից, ուշադրութեան մի ամենափոքր մասը կը նուիրէր այս հարցին:

Վօսկրիսէնկայից յետոյ ճանապարհին հանդիպում է Վարդանլի հայ և թուրք տարրերից բաղկացած գիւղը: Այս գիւղացիները շատ թշուառ դրութեան մէջ են. աւելի թշուառ է թուրքերի կացութիւնը. սրանց անմաքրասիրութիւնը զզուելի է. թէ սրանց և թէ հայերի պարապմունքը նոյնպէս անանապահութիւնը և երկրագործութիւնն է. այստեղ պէտք է ասել, որ երկրագործութիւնը սրանց ամբողջ տարվայ ապրուստը հայթայթելու անկարող է լինում, իսկ նրան նըպաստում է հողի քչութիւնը. բնութիւնը եթէ փամբակեցոց անտառը պարզած չը լինէր, սըրանցից շատերը քաղցած կը մնային, որովհետև ազատ ժամանակները փայտ են վաճառահանում Ալէքսանդրապօլ, որով և լրացնում են կենսական մթերքի պակասորդը: Հայերը ընդամենը կը լինեն 30 տուն. ունեն մի եկեղեցի և մի քահանայ. սա բնակվում է Ղարաքլիսում և տարին մի քանի անգամ հովվում է իր հօտը. հոգևոր իշխանութիւնը թէև մի քանի անգամ հրամայել է սրան իր գիւղում բնակութիւն հաստատելու, սակայն ժողովրդի քչութիւնը և նրանց անմխիթար դրութիւնը չեն կարողանում նրան իր կամքին հնազանդեցնել. բայց շատերի հետ իմ բարի խորհուրդը էլ այս է. գնալ, բնակվել այնտեղ՝ և իր հայրական քարոզներովը մխիթարութիւն պատճառել ժողովրդին. առանց այն էլ Ղարաքլիսում ոչ մի պաշտօն և եկամուտի աղբիւր չունի, ուրեմն աւելի լաւ չէ բամբասանքից զերծ մնալուց յետոյ, իր հօտի մօտ լինի և առաջնորդի նրանց՝ որպէս պարտականութիւն է մի որ և է պարտաճանաչ հոգևորականի:

Այժմ մտնենք Մեծ-Ղարաքիլիսան, Ղարաքիլիսան՝ որի վրա համարեա ամեն ժամանակ թղթակցութիւններ են պատահում. շատերը ինձ հարցրել են, թէ Ղարաքիլիսան ինչպիսի գիւղ է, որ այսքան թղթակցութիւններ են պատահում, իսկ ես նրանց պատասխանել եմ ինչպէս պէտք էր: Ղարաքիլիսեցիք առ հասարակ հետաքրքրվող մարդիկ են. նրանք ընդունակ են ընթացող կեանքի անիւների հետ յարմարվել. նրանք նախանձախնդիր են յառաջադիմականքայլերի և ջերմ զբաղվել ցանկացող առօրեայ երևոյթներով. պատճառն էլ հէնց այս է, որ ամեն ժամանակ թղթակցութիւններ են պատահում: Ղարաքիլիսան 300 տնից բաղկացած մի գիւղ է, ունի լաւ ժողովուրդ, լաւ իշխաններ, լաւ եկեղեցի, լաւ քահանաներ (բացառութեամբ), լաւ երիտասարդներ, լաւ ուսուցիչներ, լաւ զպրոցներ և, վերջապէս, լաւ մատենադարան. զպրոցների և նրա վարչական մասի վրա շատ է գրվել. այս անգամ պէտք է խօսեմ մատենադարանի և նրա հիմնադրի վրա:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

Նոյեմբերի 17-ին

Ամսոյս 8-ին Արդուինից ուղևորվեցաւ դէպի իր նոր պաշտօնատեղին, պ. Կարապետ Կամսարական: Սա, ինչպէս յայտնի է, կրտսեր եղբայրն է Վանի ռուսական հիւպատոս պ. Կոստ. Կամսարականի: Պ. Կարապետ քարտուղար էր Արդուինի դաւառական վարչութեան, իսկ այժմ նշանակված է դաւառապետ Շավշէթ-իմերխէվի վիճակի: Իր ստանձնած գործի մէջ քանիցս ցոյց տուած բազմակողմանի հմտութիւնը, ամենաքաղցր, վեհ և բարեկիր բնաւորութիւնը և դէպի հասարակական գործերն իր միշտ պատրաստական օժանդակութիւնն ու անձնուիրութիւնը՝ նըրան այնչափ սիրելի և յարգելի էր դարձրել յաչս ժողովրդեան և պաշտօնակցաց, որ դրա նըմանը հազիւ թէ կարելի լինի գտնել: Արդուինի դաւառական վարչութեան բովանդակ ծառայող խումբը և ժողովրդեան մէջից էլ բազմաթիւ յարգելի անձինք ոմանք 20 և ոմանք մինչև 50 վերստ ճանապարհ ուղեկից էին եղել իրենց սիրելի Կամսարականին: Կամսարականի յիշատակը այստեղ ամենի, այո, ամենի սրտի մէջ անջինջ տպաւորած է, որի նմանը չէ դաւառած եղել ոչ մի պաշտօնեայ կամ ժողովրդական անձ:

Մի քանի անգամ խօսված է արդէն «Մշակի» մէջ պ. Կարապետ Կամսարականի գործունէութեան մասին Արդուինի հայոց ծխական զպրոցաց վերաբերութեամբ: Եւ թէպէտ նա այժմ բաժանված է Արդուին քաղաքից, բայց 90 վերստ միայն հեռու է մեզանից և մենք քաջ վստահ ենք, որ նա կը շարունակէ դարձեալ իր եռանդագին հոգատարութիւնը Արդուին դաւառի հայոց ուսումնարանաց վրա:

Երբ, ընդհանրապէս, բոլոր ժողովուրդն անկեղծ և խորին կերպով դրոշմած կը լինի իր սրտում պ. Կամսարականի անմոռանալի յիշատակը, հապա ինչ աստիճանի հոգով, սրտով նուիրված պիտի լինեն նրան՝ նրանք, որոնք այնչափ անգամ և այնչափ առատօրէն վայելած են մանաւորապէս իր անգնահատելի ազնիւ երախտիքը: Այդ կարող է ըմբռնել և զգալ այն անձը միայն, որի սրտում հաստատիմն արմատ են ձգած շնորհապարտութեան և երախտագիտութեան ազնիւ ըզգացմունքը...

Առաքել Սարուխանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Վաչեան 17 Նոյեմբ.

Ճանաչելով ձեր անկողմնապահութիւնը և քաջ գիտենալով, որ հէնց «Մշակում» զրպարտվողը, կարող է իրան արդարացնել նոյն իսկ «Մշակում», դրա համար, խնդրում եմ ի սէր արդարութեան այս իմ պատասխանը զետեղել «Մշակի» մօտակայ համարներից մէնում:

Այս տարվայ «Մշակի» 158 համարում Ախալքալաքի թղթակիցը խօսելով նախկին եկեղեցական վարչութեան և նրա գործակատարի զեղծումների մասին, ի միջի այլոց, իբրև օրինակ, բերում է հետևեալը: Վ. (Վաչեան) գիւղի ծերունի քահանան սրանից 2—3 տարի առաջ, կամենալով ձեռնադրել տալ իր որդուն (ինձ), և որովհետև դժուար էր երրորդը ձեռնադրել տալ, դիմում է հետևեալ խորամանկութեանը: Նա պարաւանդագիր է տալի հոգ. իշխանութեանը, որ այլ ևս հրաժարվում է քահանայագործութիւնից, և իր տեղ որդուն է թողնում: Այդպիսով նրան յաջողվում է որդուն ձեռնադրել տալ և այլն: Սա ծիծաղելի և ակնայտնի ստախօսութիւն է, որովհետև հօրս ինձ քահանայ ձեռնադրել տալու նպատակն էր իմ այդ կոչման պատրաստվելս, իրան քահանայական պաշտօնի մէջ օգնական լինել և մի և նոյն ժամանակ ժողովրդի մեծ մասի ցանկութիւնն էր, և ոչ թէ քահանայական հասոյթից էլ բաժին ստանալու նպատակն էր: Հայրս հոգ. իշխանութեան ոչ մի պարաւանդագիր չէ տուել. նա առել է կարծեմ մի ստորագրութիւն, որով խոստանում է, ինչպէս մինչև այդ ժամանակ և սրանից յետոյ էլ եղած քահանայական արդիւնքը երկու հաւասար բաժին անել, մի բաժինը ստանալու ենք ես և հայրս, իսկ միւս բաժինը երրորդ քահանան: Եւ ահա քանի տարի է, մինչև այս րոպէիս այդ կերպով բաժանում ենք, ուրեմն ուր է այստեղ աւելորդ պահանջած բաժինը:—Երկու աշխատող ձեռքեր գնահատվում են մէկի հաւասար: Իսկ զալով նրան, թէ հայրս վայելելով նախկին գործակատարի բարեհաճութիւնը, միշտ խեղդել է ընկերակից քահանայի արդարացի պահանջները, յայտնում եմ, որ նախկին գործակալը գործը միշտ վճռել է արդարութեամբ և պատահել է, որ երբեմն էլ պաշտպանել է պ. Թղթակցի հաստատարված կոչվող քահանայի կողմը: Կարծեցեալ հաստատարվածը ինքը ես կը վկայէ այս:

Պ. Թղթակցի ասելով իբրև թէ մի նշանաւոր տօնի օր ոչ հայրս և ոչ ես պատարագ չենք արել և չենք էլ թողել անելու միւս քահանային: Այդ ո՞ր օրն է, պ. Թղթակից, խնդրեմ ասէք: Ոչ մի տօնին և ոչ մի նշանաւոր օր մեր ժողովուրդը չէ մնացել առանց պատարագի, այլ անխափան կատարվել է Վաչեան գիւղի քահանաներից:

Եւ երրորդ, իբրև թէ մեր վէճը մեծ չափեր ընդունելով հօրս հետ գնում ենք միւս քահանայի

իրաւունքը ոչնչացնելուց յետոյ: Նա ծիծաղում էր և ընկնում էր իր բազկաթոռի վրա: Լուսնի լոյսը ուղիղ թափվում էր նրա երեսի վրա:

Ցանկարծ, անսպասելի կերպով լռեց նա, աչքերը խփեց, և մի քանի րոպէից յետոյ սկսեց գանգատվել գլխի ցաւի վրա և հեռացաւ: Ես չւայնելով կանչեցի իմ շանը և ինքս նոյնպէս գնացի հանգստանալու:

Փոքրիկ կաղակը առաջնորդում էր ինձ դէպի ինձ համար պատրաստված սենեակը: Բակում կանգ առեց նա և կոպիտ ժպիտով նայեց լուսնի վրա:

—Որպիսի ազդեցութիւն ունի լուսինը մարդիկների և անասունների վրա,—ասաց նա, դառնալով դէպի ինձ,—ահա կը տեսնէք, այսօր բակի շունը ամբողջ գիշերը կը սկսէ թռչկոտել և կաղկանձել, իսկ կատուն մլաւելով կը վազվզէ կտուրի վրա: Բայց երբոր նրա լոյսը ընկնում է մեր խոհարարուհի պառաւի երեսի վրա, այդ ժամանակ նա քնի մէջ սկսում է խօսել և նախագուշակութիւններ անել: Ատուած վկայ, սուտ չեմ ասում:

Իմ սենեակից մի դուռ բացվում էր դէպի այգին, իսկ այգու միջից փոքրիկ թումբը հասնում էր մինչև իմ լուսամուտը: Ես բաց արի լուսամուտը և արմուկներովս յենվեցայ պատուհանի վրա:

Լրացած լուսինը իր փառահեղ բարձրութիւնից թափում էր իր հանդիսաւոր լոյսը ամբողջ դաշտավայրերի վրա. նա լողում էր ուղիղ իմ գլխի վրա խիստ պարզ և պայծառ լուսով: Մոյգ-կապտագոյն երկնքի վրա չէր երևում ոչ մի պատառ մառախուղ, և ոչ աքօղում էր նրան թեթև գոլորշիների խորհրդաւոր ու թափանցիկ ծածկոցը: Ցեղ-տեղ աստղները պլպլում էին, որպէս հանգչող կայծեր: Անսահման տարածութեամբ սիրուած էր հայրենի տափարակը դէպի արևելք. նա գտնվում էր լուռ մտախոհութեան մէջ: Սպիտակ սիմինդրը բարձրանալով, կախ էր ընկած ցանկապատից, իսկ այգու ետևում տարածվում էր ընդարձակ դաշտ, որ նման էր ահագին չախմատեան տախտակի, որի վրա սպիտակ հաճարի փոխարէն կանգնած էին ցորենի շիկագոյն արտեր և մոյգ արօտամարգեր: Ցեղ-տեղ երևում էին դէզեր, որ նմանում էին շինականների փոքրիկ խրճիթների: Հորիզոնի վրա երևում էր մի խարոյկ, որը հանդարտ կերպով վառվում էր, և նրա արծաթագոյն ծուխը կամաց-կամաց բարձրանում էր դէպի վեր. նրա շուրջը յայտնվում էին և կրկին անհետանում էին անորոշ ստուերներ, իսկ ժամանակ առ ժամանակ իմ մերձակայքից լսելի էին լինում բոժոժների թոյլ ձայներ, և երբեմն երևում էին ձիաներ, որ թողած էին գիշերային արօտի համար: Իսկ այնտեղ, ուր պարզ լսվում էր մանգաղի ձայնը, խոնաւ մառախուղի մէջ, բարձրանում էին ահագին խուրձեր, և աղօտ լոյսի մէջ տարածվում էր մարդագետինը: Աւելի հեռու, այստեղ ու այնտեղ, նշմարվում էին նիհար ու սև կոճղներ և խլուրդների բոյների մթին բլրակներ, որոնք հեռաւոր բերդերի էին նմանում: Արագավազ և պայծառ լեռնային գետակը, ապակու փշրված բեկորների նման, գեղագրական կերպով կարում անցնում էր դաշտերի միջով:

Սպիտակ կատուն, առանց շշնջիւնի, իր թաւշեայ թաթիկներով ման էր գալիս այգու մէջ և ձիւնի նման փայլում էր մթին դալարիների վրա: Խոտը ծածանվում էր և երբեմն արձակում էր ջերմ, մտերմական հառաչանքներ, որոնք յիշեցնում էին՝ ոչ բոլորովին աղաւնու մնչիւնը, և ոչ բոլորովին լացը մի յամառ և կիսաքուն երեխայի: Կատուն թռաւ ցանկապատի վրայով և շուտով խորասուզվեցաւ ջրի պատնէշի մօտ, որ թուրքի քանդված ամբարտակի նման ձգվում էր կալուածատիրոջ տնից մինչև գիւղը: Նա առանց ձայն հանելու դարձեալ դուրս թռաւ պատնէշի վրա, և նստելով աւազանի մօտ, կարծես թէ, լուռ գանգատվում էր իր վիճակի վրա, և նայում էր իր պատկերի արտացոլմանը ջրի գունաթափ, արծաթեայ հայելու մէջ: Լայնատերև նունուֆարները տարածել էին աւազանի վրա իրանց կանաչ ցանցը, որը նման էր գեղեցիկ հիւսուածքի, որի տակից տեղ-տեղ դուրս էին նայում սպիտակ և դեղին ջրային շուշաններ, որոնք լուսնի կապտագոյն լոյսի մէջ այնպէս էին թւում, որպէս թէ վառ բոցեր լինէին: Ցանկարծ այդ սիրահարված քնաշրջիկը, կատուն, ձգձգեց իր փափուկ անդամները և կամաց անցաւ բարձր, ճերմակ շամբուտի մօտով, անցաւ նախշուն շուշանների մօտով և նաւակի մօտով, որը շղթաներով կապված հառաչում էր, անցաւ և քնած կարապի մօտով, որ գտնվում էր մթին եղէգների մէջ, որոնք լուսնի լոյսի առջև կանգնած էին որպէս մի հարթած և կոկած պատ: Զորս կողմում, դալար թուփերի մէջ, որոնք պսակի նման շրջապատել էին թէ աւազանը և թէ գետը, երգում էին սոխակներ, բայց նրանցից մէկը, որ աւելի մօտ էր ինձ, այնպէս տխուր ձայնով գեղգեղում էր, որ բոլորովին այրում էր իմ սիրտը: Մրդեղէնների ահագին ծառերը իրանց սաղարթախիտ տերևներով մասամբ կլանում էին լուսնի պայծառ լոյսը, բայց այնու ամենայնիւ, ամեն մի առանձին խոտ հրապուրիչ կերպով փայլում էր, և ամեն մի ծաղիկ վառվում էր մոգական բոցով: Ամեն անգամ, երբ թեթև քամին անցնում էր այգու միջով, ցօղը, արծաթափայլ մանդիկի նման, սփռվում էր կանաչ բուսականութեան վրա, սփռվում էր աւազապատ ծառուղիների և ելակների թփերի վրա, իսկ կարմիր մեկոնը իմ լուսամուտի ներքոյ այրվում էր: Կանաչ ածունների վրա, ոսկեայ ռումբների նման, թեք էին ընկած սեխերը: Թանթրուենին, ծածկված լուսափայլիկ միջատներով, վառվում էր, ինչպէս Մովսէսի մորենին, իսկ երբ նրա վրայից թռչում էին լուսատիկ բզէզները, այդ միջոցին այնպէս էր թւում, թէ այն տեղից դէպի ամեն կողմ կայծեր էին սփռվում: Հովանոցը, ծածկված սաղարթախիտ պատատուկների հիւսուածքով, և մէջը լուսաւորված լուսնի լուսով, նմանում էր այն մատուռներից մէկին, որոնց մէջ մշտապէս վառվում է անշիջանելի կանթեղը: Երբեմն փչում էր սիրենի արբեցուցիչ անուշհոտութիւնը, երբեմն հասնում էր ինձ դալար խոտերի զուարթացուցիչ հոտը:

Ամբողջ բնութիւնը խաղաղ և աղօտափայլ կերպով վառվում էր զեղեցիկ լուսնկայ գիշերի ոգեշախոհական լուսով, և կարծես թէ աշխատում էր արտայայտել իր զգացմունքները: Զուրը երգում էր իր միակերպ երգը. երբեմն լսելի էր լինում տերևների սօսափիւնը. սոխակները հեծեծում էին, ճպռունները չըկչըկում էին. տեղ-տեղ կռկռում էին գորտերը. լուսամուտի փեղկերի մէջ մեծ ջանքով բախում էր փայտակեր միջատը, իսկ իմ գլխի վրա, բոյնի մէջ, ճլվլում էին ծիծեռնակները: Եւ յանկարծ լուսնկայ գիշերը սկսեց նուազել. լոյսը, անուշհոտութիւնը և մեղեդին միախառնվեցան մի ներդաշնակութեան մէջ. տանտիկինը ածում էր լուսնային սօնատը: Իմ սրտում տիրում էր սքանչելի խաղաղութիւն. ես երկար լսում էի, իսկ երբ երգեհոնի հնչիւնները լռեցին, ինձ այնպէս երևաց, որ ամեն ինչ լռեց և բնութեան մէջ. միայն փայտակեր միջատը անխոնջ կերպով չարունակում էր բախել:

(Կը շարունակվի)

կալը, հայհոյում ենք և կամենում ենք ծեծել:— Մեր պաշտօնակից քահանան իր մի երկու դրացիների հետ կալի մասի սեփականութեան մասին ծանր վիճելիս, ես և հայրս, ինչպէս Քրիստոսի պաշտօնեայ և հաշտութեան միջնորդներ, միջամտել ենք և հաշտեցրել մեր պաշտօնակցին ժողովրդի հետ:

Ինչպէս ասում է պ. Թղթակիցը, իբրև թէ այդ բանի մասին դանդաղ է յայտնված հոգ. իշխանութեանը. եթէ եղել է դանդաղ, ես չատ ուրախ եմ, որովհետև անաչառ քննութիւնից կը պարզվի, թէ ով է մեղաւորը և ով է հարստահարվողը: Թղթակցի պարտականութիւնը սուրբ է, նա չը պէտք է մի կուսակցութեան բողոքը լսելով բռնէ նրա կողմը, այլ և պէտք է հակառակ կուսակցութեան բողոքը լսէ և երկուսի ձայները ամփոփելով իր եզրակացութիւնը, իր կարծիքը ընդհանուր կերպով դուրս բերէ:

Այդ թղթակցութիւնից մենք այնքան հասկացանք, որ մեր հակառակորդները, պ. Թղթակցի ցոյց տուած հաւատարմութիւնից օգուտ քաղելով կամենում են պղտոր ջրում ձուկ որսալ. բայց աչքերի թոզ փչելու ժամանակն անցել է. թոզ իւրաքանչիւրը իր պաշտօնը խղճմտանքով վարէ, և ոչ թէ ընկերի ոտների տակ սապոն դնէ: Այսքան:

Սիմէօն քահանայ Տէր Գաբրիէլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք հայր Արսէն քահանայ Բագրատունուց, որ կրօնուսոյց է Թիֆլիսի Մարիամեան-Անանեան օրիորդաց դպրոցում, նրա հեղինակութիւնը այս վերնագրով. «Վերջին յուշիկ, նուէր Մարիամեան-Յովհաննեան ուսումնարանի ուսումնաւարտ աշակերտուհիներին»: Գիրքը տպված է Ս. Պետերբուրգում, Ա. Ա. Կրաևսկու տպարանում, ներկայ 1883 թուին և հրատարակված է պ. Յովհաննէս Յովհաննեանցի ծախսով: Գրքի գինն է 30 կոպէկ և ծախվում է Թիֆլիսում «Կենտրօնական», «Կովկասեան» գրավաճառանոցներում և պ. Ե. Ծատուրեանի մագազինում: Գիրքը պարունակում է իր մէջ և արձակ գրուածք և բանաստեղծութիւն: Հեղինակի նպատակն էր իր խորհրդներով, խրատներով, յորդորներով տալ ուսումնաւարտ հայ օրիորդին մի բարոյական ուղեցոյց կեանքի համար: Որքան հասել է իր այդ նպատակին հեղինակը,— այդ մասին թող դատէ ընթերցողը:

—

Լսում ենք, որ մի երիտասարդ, պ. Սարգիս Տէր-Սարգսեան դիտաւորութիւն ունի շուտով բանալ Նուխի քաղաքում մի մանկական պարտէզ: Չենք կարող չը ցանկանալ պարոնին կատարեալ աջողութիւն իր բարի դիտաւորութեան իրագործմանը:

—

Պ. Աբէլ Ապրէսեանց խնդրում է մեզ տպել մեր լրագրում հետեւեալ յայտարարութիւնը: «Շուտով առանձին գրքոյկով լոյս կը տեսնէ Մշակի մէջ տպվող Շիրվանզադէի «Գործակատարի ցիշատակարանից» գրուածքը: Գրքի գինը 50 կոպէկ կը լինի: Տպագրական ծախսերի մասին հարկաւորութիւններ ունենալով, մեզ շատ կը պարտաւորացնէ հայ հասարակութիւնը այժմվանից այդ գրքին ստորագրվելով: Աւելացնում եմ և այն, որ «Կրկնակի իտալական հաշուեպահութեան» գրքոյկի բաժանորդները, որոնք արդէն ստացել են ինձանից մի մի օրինակ «Ոսկի Աքաղաղ» գրքից, կը ստանան և երկրորդ օրինակը «Գործակատարի յիշատակարանից» գրքոյկից: Բացի սրանից թէ նոր և թէ «Կրկն. իտ. հաշ.» բաժանորդների անունները այդ վերջին գրքոյկի մէջ տպագրված կը լինեն: Հասցէս է Тифлисъ, Католическая улица, домъ Зубалова, Контора Аствацатрянца и К°, Абелу Апресянцу.

—

«Русь» լրագրի խմբագիր, Ակսակով, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, թողնում է իր լրագրի հրատարակութիւնը և ճանապարհ է ընկնում դէպի արտասահման:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական լրագիրները արտատպեցին «Evénement» լրագրից հետև եալ յօդուածը իշխան Բիսմարկի մասին: Սպանիային նա խոստանում է Պօրտուգալիա և Մարօկկօ: Եթէ նրան կաջողվի ոչնչացնել Ֆրանսիան, այն ժամանակ բուրբօնների պատմական դահի վրա նա կը բարձրացնի Հօհենցօլերներից մէկին: Իտալիային նա խոստանում է Նիցցա և Կորսիկա և վերջ ի վերջոյ դերմանական նաւատորմը նա կուղևորի Մօնակօ և Լիմթերին կը հաստատէ Վատիկանի մէջ: Պետրոս Մեծը երազում էր ռուս հսկայի մասին, որի գլուխը թաղված լինէր հիւսիսի յափտենական ձների մէջ, իսկ ոտքերը յենված կ. Պոլսի վրա, իսկ Բիսմարկ Պետրոսի Մեծի այդ երազը կիրագործէ Հօհենցօլերների համար: Պրուսիան կը տարածվի հիւսիսային ծովից մինչև Գէնուէզի ծոցը:

—«Köln. Zeitg.» լրագիրը նկատում է հետեւեալը Տօնկինի հարցի վերաբերութեամբ: Պեկինի մէջ գտնված եւրոպական բոլոր ներկայացուցիչներին ուղղած չինական շրջաբերականի ոգին չափազանց վճռողական է և կատարելապէս արդարացնում է մարկիզ Ցէնգի վարմունքը ֆրանսիական կառավարութեան վերաբերութեամբ: Չինաստանը յետ չի առնի իր պահանջներից և ոչ մէկը և յայտնում է, որ եթէ Ֆրանսիան նրանց դէմ կը լինի, պատերազմը անխուսափելի է և այս դէպքում ամբողջ պատասխանատուութիւնը Ֆրանսիայի վրա կընկնի:

—«Times» լրագիրը նորերումս մի յօդուած տպեց, որով խորհուրդ է տալիս Ժիւլ Ֆէրրիին Ֆրանսիայի վիճը Չինաստանի հետ Տօնկինի վերաբերութեամբ յանձնել Անգլիայի, Ռուսաստանի և Միացեալ Նահանգների քննութեանը: Այդ խորհուրդին Ժիւլ Ֆէրրի «National» լրագիրը պատասխանում է. «Մենք շատ շնորհակալ ենք Անգլիայից նրա բարեկամական խորհուրդի համար, բայց մենք համարձակվում ենք նկատել, որ Տօնկինի հարցը կարող են վճռել Ֆրանսիան և Չինաստանը, որովհետև դա միայն նրանց է վերաբերում: Չինաստանը պնդում է, որ իրաւունքներ ունի Տօնկինի վրա, իսկ մենք յիշեցնում ենք 1874 թուականի Գիւյեի դաշնագիրը և պնդում ենք, որ Տօնկին մեզ է պատկանում:

—«Times» լրագիրը նկատում է, որ անգլիական կառավարութիւնը շատ հեռու է գնացել կատարելու համար իր խոստումները, որ նա տուել է Եւրոպային Ալէքսանդրիան գրաւելուց յետոյ: «Եթէ Անգլիան ցանկանում է կատարել իր խոստումները, շարունակում է լրագիրը, մեր կառավարութիւնը ամեն կերպ պէտք է օգնէ այն 3000 զինուորներին, որոնք պէտք է պաշտպանեն խեդիվին մի նոր ապստամբութենից: Եւրոպան համաձայնեց, որ Անգլիան միջամտէ Եգիպտոսի գործերին և անգլիական բոլոր զօրքերի յետ կանչելը ամենքին կը զարմացնէ: Ֆրանսիան անպատճառ մեր տեղը կը բռնէ, եթէ մենք անզգուշաբար կը թողնենք այդ տեղը:»

—Տօնկինի հարցի վերաբերութեամբ «Times» լրագիրը ասում է, որ Անգլիան պէտք է պատրաստ լինի այն տխուր հետեւանքների համար, որոնք կառաջանան Ֆրանսիայի և Չինաստանի մէջ ծագած կռուից, թէպէտ չինական դանդաղ բնաւորութիւնը դեռ ևս կուշացնի վճռողական գործողութիւնները: «Times» յիշեցնում է, որ այդ պատերազմից չափազանց կը վնասվի անգլիական առևտուրը և որ չինական նաւահանգիստներում ապրող անգլիացիներին սպառնում է չինական ամբոխի ատելութիւնը: Բացի այդ, վերջին 40 տարիների ընթացքում չինացիները մեծ առաջադիմութիւն են գործել պատերազմական գիտութիւնների մէջ: Յօդուածի վերջը ասված է, որ Չինաստանը Եւրոպայի մէջ խելացի և ընդունակ ներկայացուցիչ ունի և որ կառավարութիւնը կը կարողանայ զանազանել թշնամուն բարեկամից:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հարիւր մանէթ պարգև ցանկացողներից առաջին մարդուն, որ յանձն կառնի երկու շաբաթուայ ընթացքում մի ժամուայ մէջ 24 խնդիր լուծել ըստ ամենայնի համաձայն «Кавказъ» № 235 և «Մշակ» № 169 լրագրների համարներում յայտարարած պայմաններին. մի խօսքով ճիշտ նոյն պայմաններով, ինչ պայմաններով, որ հեղինակն ինքն էր յանձն առնում խնդիրների լուծելը համաձայն վերոյիշեալ երկու լրագրներում հրատարակածին: Մի ժամ ժամանակամիջոցը կը հաշուի իմ տուած խնդրի բոպէից. ամեն մի խնդիր կը լինի առանձին թերթի վրա. այսինքն՝ 24 թերթի վրա:

* * *

Թիւրքայ Սի—Ամէդ-Վէլիչ փաշան թարգմանեց թիւրքերէն լեզուով Մոլիէրի «Ակամայ բժիշկ», «Ժլատ» և «Միզանտրոպ» կոմէդիաները: Այդ կոմէդիաները մեծ յաջողութեամբ ներկայացվեցան Ոսկեղջիւրի վրա և ֆէսաւոր հանդիսականները երդվում էին, որ վաղուց արդէն այդպէս սրբատանց չէին ծիծաղել:

* * *

Իշխան Կարլ Էդմունդ Բուրբօն:—Լուդովիկոս XVII-դի որդի Կարլ Էդմունդ Բուրբօն ապրում էր հոլանդական Բրէդ քաղաքում Նաուն-դորֆ անունով, և վերջին չքաւորութեան մէջ մեռաւ այնտեղ: Նրա ծագման վերաբերեալ գործը իր ժամանակին մեծ աղմուկ հանեց, որը առանց պարզվելու մնաց մինչև նրա մահը:

* * *

Օտարոտի վարդապետութիւն: Բանաստեղծ Ֆիլզինգի մահից յետոյ նրա թղթերի հաւաքածուի մէջ, ի միջի այլոց, գտնված է հետեւեալ օտարոտի և սրամիտ վարդապետութիւնը: Հարց. Ինչ է ազգասէր:—Պատասխան՝ մի մարդ, որը ցանկանում է լաւ տեղ ստանալ:—Հարց. Ինչ է քաղաքականութիւն:—Պատասխան՝ արուեստ շահաւէտ պաշտօն ստանալու համար: Հարց. Ինչ է գիտութիւն:—Պատասխան՝ գիտութիւնը արուեստ է խմանալու մեր մերձաւորների բոլոր թուլութիւնները և սխալները:—Հարց. Ինչ բան է առաքինութիւն:—Պատասխան՝ բաւական հետաքրքիր թեմա խօսակցութեան համար:—Ինչ բան է ծառայութիւնը:—Պատասխան՝ փող, աստիճան և կրէդիտ:—Հարց. Ինչ է խելքը:—Պատասխան՝ մի միջոց է ստիպելու ուրիշներին, որ քեզ ատեն»:

* * *

Հրաշալի բժիշկ:—Փարիզում, Մօնմարարեան արուարձանում այս օրերս մի հրաշալի բժիշկ ընակվեցաւ, գիտութեան մէջ անայտ օտար անունով, որը սակայն նշանաւոր հմտութիւններով և բժշկութեան մեթոդով շուտով այնպիսի հռչակ ստացաւ համաշխարհային քաղաքում, որ ամենքը շտապում էին նրա հետ խորհրդակցելու համար: Բայց նրա հետ տեսնվել և խորհրդակցել շատ դժվար էր. խորին գաղտնիքով ծածկված էր հասարակութիւնից այդ մարդու կեանքի եղանակը. նրա ծառաները չէին համաձայնվում մերկացնել բժշկի կենցաղավարութեան ներքին մանրամասնութիւնները: Վերջ ի վերջոյ, այդ բոլոր աղմուկի և խորհրդաւորութեան վրա ուշադրութիւն դարձրեց Փարիզի պօլիցիան և մէկ գեղեցիկ առաւօտ պօլիցիական կոմիսարը ներկայացաւ բժշկին և պահանջեց նրանից նրա դիպլօմը: Փոխանակ սպասված երկիւղի և զարմանքի, բժիշկը չափազանց ուրախ տրամադրվեցաւ և ծիծաղով բացարեց պօլիցիական գործակատարի առաջ իր դիպլօմը, Փարիզի համալսարանի իսկական դիպլօմը, վկաների ճիշդ ստորագրութիւններով և կնիքով: «Բայց—շարունակեց խօսել բժիկը, յանկարծ լուրջ կերպարանք ընդունելով— ես ձեզ յայտնեցի իմ գաղտնիքը, և խնդրում եմ ոչ ոքին չը պատմէք, ինչոր տեսաք, որովհետև եթէ իմ հիւանդները կիմանան, որ ես մեր հայրենի Փարիզի համալսարանի իսկական բժիշկն եմ, նրանք խկոյն և եթ կը թողնեն ինձ և այլ ես չեն վերադառնայ»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՎԻԼՆՕ, 21 Նոյեմբերի: Երէկ կայացաւ Վիլնօի դատաստանական պալատայի և նահանգական դատարանի հանդիսաւոր բացումը, որի ժամանակ ներկայ էին զինուորական և քաղաքական բարձր իշխանութեան բոլոր ներկայացուցիչները, քաղաքի ներկայացուցիչները, հոգևորականութիւնը, դասակարգային ներկայացուցիչները և ընտրեալ հասարակութիւն: Լիտովսկի և Վիլնօի արքեպիսկոպոս սրբազան Ալէքսանդր մաղթանք կատարեց և բազում տարիներ մաղթեց թագաւոր Կայսրին, Կայսրուհուն, թագաժառանգին և թագաւորող ամբողջ Ընտանիքին:

ՏԱԳԱՆՐՕԳ: 21 Նոյեմբերի: Տաք եղանակի պատճառով նաւագնացութիւնը Դօն գետի և Ազովեան ծովի վրա նորից սկըսվեցաւ:

ՊԵՇՏ, 21 Նոյեմբերի: Գեներալ բարօն Բամբէր արձակված է արքունական գործակատարի պաշտօնից Խօրվատիայի մէջ: Կոմս Կիւն-Գեդերվարի նշանակված է Խօրվատիայի խան, իսկ Բենդեկովիչ Խօրվատական մինիստր:

ԲԵՐԼԻՆ, 21 Նոյեմբերի: Վախճանվեցաւ Պայէր, յայտնի ճանապարհորդը դէպի հիւսիսային բևեռը:

ԿԱՅԻՐԷ, 21 Նոյեմբերի: Լուրերի համեմատ Բանէն նահանգում, կասսամի շրջաններում, բեդուինների ցեղերը նոյնպէս ապստամբվեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 Նոյեմբերի: Երէկ Ս. Պետերբուրգի դատաստանական հիմնարկութիւնների շինութեան մէջ հանդիսաւոր կերպով բացվեցաւ Կայսր Ալէքսանդր II-ի արձանի բացումն: Բացման ժամանակ ներկայ էին արդարութեան մինիստրը, ներքին գործերի մինիստրի օգնական Դուրնօվո, Պետական խորհուրդի անդամները, սենատորներ, Ս. Պետերբուրգի դատաստանական պալատայի և նահանգական դատարանի աստիճանաւորները, ծովային և զինուորական դատարանների բարձր ներկայացուցիչները և ուրիշ անձինք: Մաղթանքից յետոյ Ս. Պետերբուրգի դատաստանական պալատայի աւագ նախագահը մի ճառ արտասանեց այն նշանակութեան մասին, որ տալիս էր Հանգուցեալ Կայսրը դատաստանական վերանորոգութեանը: Կայսրի արձանը շինուած է ամբողջ հասակով: Աջ ձեռքին բռնած ունի 1864 թուականի Նոյեմբերի 20-ի դատաստանական օրէնքները: Այն նիշայի վերև, որտեղ դրված է արձանը, գրված է. „Արագ, արդարացի, ողորմած և ամենքի համար հաւասար դատաստան կատարեցէք:“ Պետական կայքերի մինիստրութիւնը նախագծում է, որ դանձարանը փոքր առ փոքր ձեռք բերի Ուֆայի և Օրենբուրգի նահանգների բաշկիրների հողերը: Հրէաների մասին օրէնքները վերաքննող յանձնաժողովի նիստերը կը սկսվեն Նոյեմբերի 25-ին: Երէկ Ս. Պետերբուրգի մէջ մեծ ձիւն եկաւ:

ԿԱՅԻՐԷ, 21 Նոյեմբերի: Գիկսա-փաշային յաղթելուց յետոյ սուտ մարգարէն պատերազմական աւարով յետ քաշվեցաւ Օբէյիդ:

ՓԱՐԻԶ, 21 Նոյեմբերի: Պատերազմական մինիստրը բաւական մեռց նոր ձևի հրացանների փորձերից և դարձեալ փորձեր անելու համար նրանցով զինաւորվում են մի քանի գունդերի մասեր:

ԲԷԼԳՐԱԴ, 21 Նոյեմբերի: Լրագրական լուրերը նոր անկարգութիւնների մասին հնարված են: Ամեն տեղ հանդիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 Նոյեմբերի: Մուրհակների կուրսերը բարձրանում են: Լօնդօնի վրա 1 ռուբլ արժէ $23^5/_8$ պէնս:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

փորձված ՃԱՐՏԱՐԱՊԵՏ և ՏԵԽՆԻԿ համեմատաբար փոքր գնով յանձն է առնում քաղաքային շինութիւնների նախագծերի և նախահաշիւների կազմելը, պլանների կազմելը իր տեղ և հսկողութիւն աշխատանքների վրա: կարելի է տեսնել ամեն օր առաւօտեան 7—9 և երեկոյեան 3—9 ժամը: Անդրէեվսկայա փողոց տուն № 35:

1—4 (2)

Շատ ՁԵՌՆՏՈՒ գնով ծախվում է ՏՈՒՆԸՍ և նրա մօտի ԱՅԳԻՆ, որ գտնվում է Նախիջեւան գաւառի ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ մէջ և որ պատկանում է ինձ, նոյն գիւղի բնակիչ Մեհրաբ Մեհրաբեանցին: խնդրում եմ պ. պ. ցանկացողներին դիմել ինձ այս հասցէով, ԱԳՈՒԼԻՍ, Մեհրաբ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻՆ:

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ նոյեմբերի 26-ին նշանակելով հեռեւեալ աճուրդները 1) Վերայի կամուրջը տանող ճանապարհը քարահատակելու համար և 2) Կիրօչնայա փողոցը Միխայլօվսկայա փողոցից մինչև Վերայի կամուրջը ուղղելու և քարայատակելու համար, հրաւիրում է այդ աշխատանքները վերցնել ցանկացողներին ներկայանալ աճուրդին 12 ժամին: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր 10 մինչև 2 ժամը:

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄՔԱՐՆԵՐ

ԻՒՐԻԻ ՖԷՕԴՈՐՕՎԻՉ ԱԽՎԵՐԴՕՎԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1883 Թուականի հրատարակութիւն: Այդ գիրքը ծախվում է յօգուտ Արհեստից ուսումնարանի աղքատ աշակերտների, Շավերդովի լրագրական գործակալութեան մէջ:

3—10

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա:

Միակ գործակալութիւն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ: Նոյն տեղը կան ամեն տեսակ ձեռագրերի համար մեծ քանակութեամբ ԳՐԻՉՆԵՐ ամեն ձեւի 25% էժան քան թէ ուրիշ տեղ: կան նոյնպէս ԹԱՆԱՔ, թուղթ, տետրակներ, գմուռ, ՄԱՏԻՏՆԵՐ, քարեգրիչներ, ԳՐՉԱԿՈԹ, պենալներ, քսակամաններ, ծխախոտի ՄԿՐԱՏՆԵՐ, ածելիք, սրոցներ, խալիչաներ, ԲԱՋԿԱԹՈՌ ՄԱՀՃԱԿԱԼ, վերարկու կախելու համար իրեր, ԳՈՏԻՆԵՐ, անօտներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, Ջրամաններ, երես լուանալու ամաններ, Ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի չչէօտկադլխի, երկաթէ թելերից, ձիու համար: Մակենտօշներ: Բժշկական թուղթ վառերկլօզետի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:

99—100

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

42—50

վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ

մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:

88—100

ԲԱՑՈՒԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1884 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

„ԱՂԲԻՒՐ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԻԱՄՍԵԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

(ՏԱՐԵՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Կը հրատարակվի մի և նոյն ծրագրով, մի և նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ:
II. Բանաստեղծութիւններ:
III. Գիտութիւն և արուեստ:
IV. Հետաքրքիր տեղեկութիւններ:
V. Այլ և այլք:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI. Մանկական, փրեբելեան, շախմատի և այլ խաղեր, ռեբուսներ, թւաբանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, չուտասելուկներ:
VII. Երգեր նոտաներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ:
IX. Առաջարկութիւններ, խորհուրդներ:
X. Մատենախօսութիւն և նոր գրքեր:
XI. Խառն լուրեր:

Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Երկրորդ բաժինը կը հրատարակվի առանձին թերթերով տարենը չորս անգամ:

Տարեկան բաժանորդները կըստանան երկու պրեմիա, յուլիսին և դեկտեմբերին:

„ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան բաժանորդագինը 3 րուբլի է, կէս տարվանը 2 րուբլի: Հասցէն՝ Тифлисъ, редакція „Агпюръ“, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

„ԱՂԲԻՒՐԻՆ“ Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրավաճառանոցներում, պ. Շահվերդեանի պավիլիօնում ու Մանկական գրադարանում:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

3—3

ՎԻԷՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՕՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կօշիկներ-տնամաններ, գուլպա-չուլքեր, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, ալլուխներ-բաղդադիք կովկասի ճաշակով, շալիկներ, ժամացոյցեր, ոսկէ և արծաթէ: Ամեն տեսակ սպիտակեղէններ (չուշեղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն: Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ-գդալներ Ցրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գըլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով: Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (безъ-запроса): Ընդունում է պատուէրներ օտար քաղաքներից ամեն տեսակ ապրանքների:

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова. ՄԱՆԻ

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

լրագրական գործակալութեան գրավաճառանոցում

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Բաժանորդագրվում են ամեն տեսակ պարբերական հրատարակութիւններին, ինչպէս տեղական, Ռուսաստանի, նոյնպէս և Արտասահմանեան:

Հասցէն:—Тифлисъ. въ Газетное Агентство В. Шавердова.

6—10

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ ՌՈՒՍ և ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ:
ՀԱՍՑԷՆ ՀԱՐՑՆԵԼ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ:

5—5

Съ 1-го января 1884 г. начнетъ выходить при редакціи „ТЕХНИЧЕСКАГО ОБЗОРА“, въ С.-Петербургѣ, Троицкій пер., № 40, сельско-хозяйственный журналъ: „ПРОГРЕССИВНОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО“, еженедѣльный журналъ новѣйшихъ открытій и усовершенствованій въ сельскомъ хозяйствѣ и кустарныхъ производствахъ, съ безплатнымъ приложеніемъ еженедѣльной общественной и литературной газеты „РОДИНА“, по нижеслѣдующей программѣ:

1) **Правительственныя распоряженія и узаконенія**, относящіяся къ сельско-хозяйственной и кустарной промышленности.
2) **Полеводство.** 3) **Лѣсоводство.** 4) **Садоводство.** 5) **Скотоводство.** 6) **Пчеловодство.** 7) **Рыбоводство.**
8) **Сельско-хозяйственные рецепты и наставленія.**
9) **Патенты по сельскому хозяйству**, какъ русскіе, такъ и иностранные, съ пояснительными политипажами.
10) **Сельско-хозяйственная механика**, съ пояснительными чертежами.
11) **Сельско-хозяйственная строительная архитектура**, съ пояснительными чертежами и планами.
12) **Кустарныя производства.**
13) **Спортъ и охота.**
14) **Домашнее сельское хозяйство**, находящееся въ веденіи хозяекъ.
15) **Сельско-хозяйственная библіографія** на русскомъ, польскомъ, нѣмецкомъ, французскомъ и англійскомъ языкахъ.
16) **Телеграммы съ торговыхъ рынковъ**, главнѣйшихъ городовъ Россіи и иностранныхъ государствъ, о торговлѣ сельско хозяйственными продуктами.
17) **Торговая корреспонденція.**
18) **Вопросы и отвѣты** по всѣмъ отраслямъ сельскаго хозяйства и кустарной промышленности.
19) **Экономическій отдѣлъ**, въ которомъ будутъ помѣщаться:
а) Статьи, касающіяся нуждъ и улучшеній сельскаго хозяйства и кустарной промышленности.
б) Статьи, могущія имѣть соприкосновеніе съ экономическою жизнью сельскихъ хозяевъ, сельскихъ хозяекъ и кустарныхъ производителей.
в) Статьи, имѣющія цѣлью способствовать развитію сельско-хозяйственной и кустарной промышленности и сдѣлать ихъ болѣе производительными и болѣе выгодными.
20) **Смѣсь.** 21) **Объявленія.**

Въ газетѣ „**Родина**“ будутъ помѣщаться: Современныя событія; общественныя дѣла; отечественная исторія; науки, искусства и художества; изящная словесность: романы, повѣсти, разсказы и стихотворенія; критика; обзоръ журналовъ по всѣмъ отраслямъ знанія; иностранная хроника; столичная и провинціальная жизнь; новѣйшія заграничныя извѣстія и проч. и проч.

По мѣрѣ надобности, къ журналу „Прогрессивное Сельское Хозяйство“ будутъ прилагаться чертежи и планы.

Жуналъ будетъ выходить еженедѣльно.

Подписная цѣна на журн. „Прогрессивн. сельское хозяйство“, съ прилож. газеты „Родина“, 4 Р., съ пер. 6 Р. на 1 годъ.

Достойно удивленія, что въ Россіи, странѣ по преимуществу земледѣльческой, не имѣется ни одного частнаго сельско-хозяйственнаго журнала, хотя, какъ всякому практику извѣстно, въ настоящее время, когда природная плодотворность земли уже истощена, земледѣліе можетъ процвѣтать лишь при условіи веденія его на основаніи научно-практическихъ данныхъ, и поэтому, появленіе каждаго новаго изданія, способствующаго этой цѣли, должно быть встрѣчено съ полнымъ сочувствіемъ.

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Ноября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.